

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն



Սիրելի՛ հայրենակիցներ,

**Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության
Գավառի պետական համալսարանը հայտարարում է 2015/2016 ուստարվա
առկա ուսուցման ընդունելություն: Դիմորդների գործերը ընդունվում են ա/թ
մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը՝ ժամը 18⁰⁰, ամեն օր ժամը 9⁰⁰-ից մինչև 18⁰⁰-ն:
Դիմորդները դիմում-հայտի հետ ներկայացնում են՝**

- ա) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),**
- բ) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),**
- գ) փաստաթուղթ գինվորական ծառայության առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են գինվորական հաշվառման փաստաթղթերում՝ տարկետման իրավունք սվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),**
- դ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, գինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,**
- ե) գինվորական գրքույկ և գինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային գինվորական ծառայությունն անցած լինելու մասին,**
- զ) ՀՀ պետական բուհերում սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր,**
- է) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները /առկայության դեպքում/,**
- ը) փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:**

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է:

Քննություններին և մրցույթին մասնակցելու դիմում-հայտը փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ:

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, 1201

ԳՊՀ գլխավոր մասնաշենք, 2-րդ հարկ, 218 սենյակ:

Հեռախոս՝ 0264 2-57-75, 060-46-12-43, 060-46-04-03

ԳՊՀ Ընդունող հանձնաժողով

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2015-2016 ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՌԿԱ ՈւՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵՐԸ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ

| Դասիչ | Մասնագիտությունը | Ընդունելության քննություններ | | | | Անվճար տեղեր | | ԱՏ, վճարովի | ուսման վարձը հազար դրամ |
|--------|--|------------------------------|-----------------------------|---------|-------------------------------|-------------------------------------|---------------|-------------|-------------------------|
| | | Մրցութային | | | Ոչ մրցութային | Անվճար տեղեր (տարկետման իրավունքով) | Այդ թվում՝ ԲԳ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 | 10 | 11 |
| 020200 | Կենսաբանություն | Կ (զ) | Ք (զ) ** կամ Ֆ (զ) ** | | Հլգ (զ)* | 0 | - | 25 | 270 |
| 020400 | Աշխարհագրություն | Ա (զ) | Մ (զ) ** | | Հլգ (զ)* | 0 | - | 25 | 270 |
| 020500 | Քարտեզագրություն և կադաստրային գործ | Ա (զ) | Մ (զ) | | Հլգ (զ)* | 0 | - | 35 | 270 |
| 020800 | Բնապահպանություն և բնօգտագործում | Կ (զ) | Ֆ (զ)** կամ Ք (զ)** | | Հլգ (զ)* | 0 | - | 25 | 270 |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ (զ) | ԸՊ (զ) կամ Օտլ (զ) | Հլգ (զ) | | 3 | - | 22 | 280 |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ (զ) | ՀԺՊ (զ) | Օտլ (զ) | | 0 | - | 30 | 520 |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ (բ) | Հլգ (զ) | | ՀԺՊ (զ) * կամ Օտլ (զ) * | 3 | - | 22 | 270 |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ (բ) | Անգլ (զ) | Հլգ (զ) | | 2 | - | 23 | 350 |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռուգ (բ) | Ռլ (զ) | | Հլգ (զ)* | 2 | - | 23 | 270 |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ | Հլգ (զ) | Մ (զ) ** | | | 3 | - | 22 | 280 |
| 080300 | Ֆինանսներ | Մ (զ) | Հլգ (զ) | Օտլ (զ) | | 3 | 1 | 27 | 360 |
| 080600 | Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում | Մ (զ) | Հլգ (զ) | Օտլ (զ) | | 3 | - | 22 | 360 |
| 081500 | Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ | Մ (զ) | Հլգ (զ) | Օտլ (զ) | | 3 | 1 | 27 | 360 |
| 230100 | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | Մ (զ) | Ֆ (զ)** | | Հլգ (զ)* | 3 | 1 | 22 | 350 |
| 100100 | Սերվիս | Ա (զ) կամ ՀԺՊ (զ) | Հլգ (զ) | Օտլ (զ) | | 2 | - | 33 | 270 |
| 021000 | Դեղագործական քիմիա | Ք (զ) | Կ (զ) կամ Ֆ (զ) | | Հլգ (զ)* | 0 | - | 35 | 270 |

** Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցութային մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

* Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից: